ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.06.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/144

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Կարաս Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ Մ. Եսայանի և Ք. Փաշինյանի (լիազորագիր՝ տրված 30.05.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.06.2021թ. թիվ 26/26-1/8741-2021 գրությամբ «Կարաս Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության 25.05.2021թ. թիվ 02//2662-2021 գրության հիման վրա 01.06.2021թ. թիվ 26/26-1/8741-2021 գրությամբ նախաձեռնել է «Կարաս Գրուպ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Կարաս Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Կարաս Գրուպ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Արտակարգ իրավիճակների նախարարության կարիքների համար սննդամթերքի պատրաստման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/52» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հաղթող մասնակից է ճանաչվել Ընկերությունը:

2021թվականի մայիսի 5-ին Ընկերությանը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցվել է պայմանագրի նախագիծը՝ առաջարկելով սահմանված ժամկետում ներկայացնել հաստատված պայմանագիրը, պայմանագրի և որակավորման ապահովումները: Էլ. փոստի միջոցով ուղարկված գրության մեջ առկա է եղել հետևյալ ձևակերպումը. «Հարգելի գործընկեր, Ձեզ եմ ներկայացնում Արտակարգ իրավիճակների նախարարության կարիքների համար պատրաստման ծառայություններ ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/52 պետական գնման պայմանագիրը: Խնդրում եմ 2 օրինակ կնքել և տուժանքի համաձայնագրի հետ ներկայացնել»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

Ելնելով վերոնշյալ դրույթից՝ մասնակիցը /տվալ դեպքում՝ Ընկերությունը/ զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից, եթե պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո' 10 աշխատանքային օրվա ընթացքում.

1. չի ստորագրում պայմանագիրը, և
2. պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի ապահովումը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակից, ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Ընկերության աշխատակիցը 2021 թվականի մայիսի 19-ին (մինչև Օրենք, 36-րդ հոդվածով սահմանված 10-օրյա ժամկետի լրանալը) ստորագրված պայմանագիրը ներկայացրել է «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲ ընկերության մասնաճյուղ՝ Պատվիրատուին ուղարկելու նպատակով /կոդ RG031603371AM/, որը Պատվիրատուին է հանձնվել 2021 թվականի մայիսի 21-ին:

Վերոգրյալից ելնելով՝ Ընկերությունը լիարժեք կատարել է իր պարտավորությունները՝ սահմանված ժամկետում ստորագրելով և Պատվիրատուին ուղարկելով պայմանագիրը և պայմանագրի ապահովումը:

Ինչպես հետևում է, Ընկերության գործադիր մարմնի ղեկավարը՝ նախագահը, ստորագրել է թե պայմանագիրը, թե տուժանքի մասին համաձայնագիրը՝ պահպանելով Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին պահանջը, ինչպես՝ Պատվիրատուին է ներկայացրել պայմանագրի ապահովումը՝ ստորագրելով տուժանքի համաձայնագրերը՝ դրանք փոխանցելով փոստային ծառայությանը, հետևաբար բացակայում է Օրենքի 6-րդ հոդվածի հիման վրա Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքը:

Եթե նույնիսկ տեսականորեն դիտենք, որ Ընկերությունը չի պահել պայմանագիրը և ապահովման միջոցը Պատվիրատուին ներկայացնելու պահանջը, ապա պայմանագրի ստորագրման պահանջն Ընկերությունը միանշանակ պահել է, քանի որ Օրենքով սահմանված 10-օրյա ժամկետի ավարտին արդեն իսկ պայմանագիրը ստորագրված է եղել: Մինչդեռ Ընկերության գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար անհրաժեշտ է վերոնշյալ երկու պայմանների միաժամանակյա առկայությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում ենք «ԿԱՐԱՍ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում չներառել»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/144 ընթացակարգի շրջանակներում 08.06.2021թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 25.05.2021թ. թիվ 02//2662-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ Արտակարգ իրավիճակների նախարարության կարքների համար սննդամթերքի պատրաստման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/52» ծածկագրով գնանաշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվել «Կարաս» ՍՊԸ-ն:2021թ. մայիսի 05-ին մասնակցին ծանուցվել է պայմանագրի նախագիծը՝ առաջարկելով սահմանված ժամկետում ներկայացնել հաստատված պայմանագիրը, պայմանագրի և որակավորման ապահովումները: Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետի ավարտին մասնակիցը պայմանագիրը չի ներկայացրել:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» պարբերությունը՝ խնդրում եմ նախաձեռնել «Կարաս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետը՝ ներկայացվում է համապատասխան հիմնավորող փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/144 ընթացակարգի շրջանակներում 08.06.2021թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/144 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/144 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կարիքների համար հայտարարվել է «ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/52» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Կարաս Գրուպ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.04.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Կարաս Գրուպ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից և նույն արձանագրությամբ որոշվել է անգործության ժամկետի ավարտից հետո վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 05.05.2021թ. armeps էլեկտրոնային եղանակով ծանուցել է «Կարաս Գրուպ» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 21.05.2021թ. «Կարաս Գրուպ» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից, այն հիմքով, որ վերջինս «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը, ինչպես նաև չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 01.06.2021թ. թիվ 26/26-1/8741-2021 գրությունը, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության 25.05.2021թ. թիվ 02//2662-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Կարաս Գրուպ» ՍՊԸ-ի դիրքորոշումը և կից փաստաթղթերը, գործում առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

<u>բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,</u>

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված

մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. ***Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:*** Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին....:

Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիր:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպես, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կարիքների համար հայտարարվել է «ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/52» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Կարաս Գրուպ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.04.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Կարաս Գրուպ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից և նույն արձանագրությամբ որոշվել է անգործության ժամկետի ավարտից հետո վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 05.05.2021թ. armeps էլեկտրոնային եղանակով ծանուցել է «Կարաս Գրուպ» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 21.05.2021թ. «Կարաս Գրուպ» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից, այն հիմքով, որ վերջինս «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը, ինչպես նաև չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները:

Ընթացակարգի հրավերի 9.3-րդ, 9.4-րդ և 9.5-րդ ենթակետերի համաձայն՝

9.3 ***Ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով:*** Ընդ որում պայմանագրում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

9.4 Պայմանագիր կնքելու մասին պատվիրատուի ծանուցումն ընտրված մասնակցին ուղարկելու օրը հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ընտրված մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ պայմանագիր կնքելու առաջարկը տրամադրված լինելու մասին:

9.5 ***Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:*** Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր....:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ ***Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:***

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***<u>եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:</u>***

Այսպիսով՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանվում է հստակ ժամկետ պայմանագիրը ստորագրելու, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները ներկայացնելու համար, որոնք չպահպանելու դեպքում մասնակիցը զրկվում է պայմանագիրը կնքելու իրավունքից:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել, որ սույն գործի շրջանակներում Պատվիրատուն էլեկտրոնային եղանակով տրամադրել է «ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/52» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Ընկերության կողմից պայմանագրի կնքման նպատակով փոստային առաքման միջոցով Պատվիրատուին ուղարկված ծրարում ներառված փաստաթղթերը:

Այսպես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ **<u>10 աշխատանքային օրվա ընթացքում</u>**, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***<u>մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված</u>***:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Այսպիսով՝ գնահատելով գործում առկա ապացույցները՝ համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ, արձանագրում եմ, որ «Կարաս Գրուպ» ՍՊԸ-ն, 05.05.2021թ. ստանալով պայմանագիր կնքելու առաջարկը, Օրենքով սահմանված 10 աշխատանքային օրյա ժամկետում՝ 19.05.2021թ., կապի կազմակերպությանը, այն է՝ «Հայփոստ» ՓԲԸ-ին,

հանձնել է ստորագրված պայմանագիրը, պայմանագրի ու որակավորման ապահովումները, որպիսի պայմաններում գտնում եմ, որ Ընկերությունը թույլ չի տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտում, և առկա չեն վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներից ցուցակում ներառելու հիմքերը, քանի որ Ընկերությունը, որպես ընտրված մասնակից, չի հրաժարվել պայմանագիր կնքելուց:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.06.2021թ. թիվ 26/26-1/8741-2021 գրությամբ «Կարաս Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**